



ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 93

3 ՄԱՅԻՍ 1913

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ



ԿԱԹՈՂՈՍԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԱՐԱԹ-ԱՐԹ-ԵՐԹ

Երրորդ տարի ③ 3 Մայիս 1913 ③ Թիւ 93

«Մերական Քաճանայացեան Պիոս Ժ. կը մաղթէ որ Կարողիկէ Աւճազանց շաքապերը շա-
րունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
սարել, ի բարգաւաճման կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար
Մերական Հայրն սրտագին կ'օրհնէ յիշեալ Շաքապերը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ Կարդ. Մէրի Տէլ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս ԺԳ. Թեքեան, Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ,
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 բուանամարաւ:

ԴԵՊՔԵՐ ԵՒ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐ

ԵՄՄԱՌՈՒՄՈՒ ՈՒՂԵՒՈՐԸ

Բ.

(Շար. եւ վերջ)

Շաւղին գլուխը կանգ առաւ Գեղաղէմ
երիտասարդը: Իր դիմագծերը անպատում
քաղցրութեան ցոլք կը ճառագայթէին: Իր
ծաւի աչուքներէն կը ցայտէին կարծես յա-
ւիտենական խորհուրդներ:

Հիանալի շարժումով մը սղջունեց՝ կար-
ճատեւ կենկացութեան երկու խեղճ ուղե-
կիցները, և ուղեց մեկնիլ, մեկնիլ հեռու,
անծանօթ տեղեր, սրարբեցուցիչ կլիմաներ,

անկոխ սրբավայրեր, երանութեան գաւառ-
ները:

— «Ո՛հ ո՛չ, ո՛հ ո՛չ» աղաղակեց՝ ճամ-
բորդներէն յուսակտուր ծերունին: Ո՛հ մի՛
թողուր զմեզ. երանաւէտ մխիթարութեան
կաթիլներ ցօղեցիր մեզ, և ծո՛ւ կայ ի քեզ.
արծարծեցիր մեր յուսոյ և գիտութեան առ-
կայծ ճրագը, և ճշմարտութեան արեւ մը
կայ հոգւոյդ մէջ. ո՛հ մի՛ զրկեր զմեզ, մի՛
թողուր զմեզ»:

Ամուր կը պնդէր Գեղաղէմ երիտասարդը,
կը պնդէր մեկնիլ:

«Տե՛ս ո՛վ երջանիկ պատանի, վրայ բե-
րաւ կրտսեր ճամբորդը, տե՛ս, մեռա՞ծ է օ-
րը, տարածամ է իրիկունը, և գիշերը վե-
րահաս: Խնչպէս պիտի ուղղես անստոյգ քայ-
լերդ. Աստուծոյ սիրոյն համար միայնակ մի՛
թողուր զմեզ, զի ա՛ն առեն տխրութենէ կը
մեռնինք»:

Դեռ կը պնդէր Գեղաղէմ՝ երիտասարդը, կը պնդէր մեկնիլ:

Ձեռքերուն փարեցան ու համբուրեցին, ու ձեռքերը կաթեցուցին զմուռս, ու ոտքերուն փարեցան ու երկրպագեցին. և բռնադատեցին, սիրաւ յուզեցին, սէրը զարթուցին ու ըսին. «Թա՛ մեզի, մեր քով մնացիր»...:

Սարսուռ մը անգաւ օդին մէջէն. արեւելեան հորիզոնին վրայ բարձրացող լուսինը իր լրութեամբ արծաթաթել շողեր կաթեցուց. և արեւմտեան չափիւղայ կամարէն դողդոջ կայտոեցան Արուսեակ և Հայկ. և հառաչներ բուրեցին ճամբան եղերող յասմիկ, յակինթ, նարդոս, հիրիկ ու կակաչներ, նոր կոկոններ, ձիւն շուշաններ. ու փսփսացին ծաղկաշատ մարգեր ու արտեր, և նորափթիթ ուռիներ. ու աստուածային ելեւէջով հուժկու երգեց Սոխակը. ամբողջ խայտացող Բնութենէն կը բարձրանար օրհնութեան մեղեդի մը՝ անսահման:

Եւ երբ բռնադատեցին Սէրը, տեղի տուաւ սիրոյ պատճառանքը. Ինքն էր նախ կարօտացածը որ երկնից գաւառներէն իջած խոնարհած էր մարդուս խեղճութեան, և «Յանկանալով կը ցանկար» ուտել իրեններուն հետ, և ուրիշ բանի չունէր փափաք եթէ ոչ «Իր երկիր բերած հուրը բորբոքել» մարդոց մէջ, «Ուրոց հետ մնալն եր իր միակ հանդիս ու վայելք» և «Հանգիստ յաւիտեանս յաւիտեանից»:

Եւ սիրողաց բռնադատութեան առջեւ հեզահամբոյր ու ժպտուն ու կամակատար՝ Գեղաղէմ երիտասարդը, — Գեղեցիկ իբրեւ ծաղիկ դաշտաց, շուշան հովսաց, — Մտաւ Եմ մառուս, իր խեղճ ընկերներուն խոնարհ յարկին ներքեւ:

Եւ յիշեցին Զակէթոսի տունը...:

Հիւրասիրուած զարմանալի Օտարականը նստաւ, ու պահ մըն ալ շարունակեց թափել իր անգիւտ գանձերն Իմաստութեան՝ զօրոնք բերած էր անծանօթ աշխարհներէ. այդ գանձերու հետ պիտի չփոխանակուէին՝ ո՛չ եթովպոյ ոսկին, ո՛չ Ծուրայ ծիրանին, ո՛չ Հնդկաց մարգարիտներ ու գոհարներ... տիղմ անարգ էին անոնց քով հեշտասէր գըր-

գանք, անզուսպ գոհացում, պերճանք, գահ ու թագ... Մեղր կը կաթեցնէին Անոր ազաներարբառ շրթունքը. Կերա՛յք մերձաւորք իմ եւ արբե՛ք, եւ արբեցաւոր՛ւք եղբորդիք իմ... Սիրս իմ արթուն կայ: — Եւ ըզմայլեցան իր ընկերները. անյագ խոնցին այդ կենաց ուղիները:

Եւ երբ ընթրիքը աւարտելու վրայ էր, յանկարծ այլակերպեցաւ Գեղաղէմ երիտասարդը. նորօրինակ արեւու մը պէս ճառագայթեց. աչուրներէն Սէր կը կաթէր, Սէր՝ ամբողջ էութենէն. սպիտակ, լուսնոյն դարձաւ իր թափանցիկ մարմինը, և անմահութեան հոտ մը բուրեց. և սկսան թեթեւ հնչել հրեշտակային մեղեդիներ: Հաց առաւ. օրհնեց, կոտրեց ու տուաւ անոնց:

Առին կերան... բայց յանկարծ տեսան. տուած Հացը՝ Ինքն էր...

ՅԻՍՈՒՍ էր...

Ինկան երկրպագելու. ոսկեշող ամպ մը պարուրեց զՅիսուս ու եղաւ անոնցմէ աննրեւոյթ:

Հիասթափ կանգնեցան ու իրարու նայեցան. հաւատացեալ ու սիրազեղ կանգնեցան, սրտաճմիրկ սրտատրոփ՝ բայց աստուածայնացեալ. վայրկեան մըն էր անցուցին. յաւիտեանականութիւն էր այդ վայրկեանը. տեսան զՔրիստոս անմահ Թագաւոր, փառաւորեալ անհունապէս. լուսաշող տեսան Անոր ձեռաց և սոփեղ վէրքերը, կարմիր կոկոններու պէս, և վարդի պէս բուրեց բացուած Կողը, որմէ հուր ցայտեցուց Սիրտն Աստուածային, «Փնփափ անձկութեան, բարձրեալ անգին, զօրեղ անպատում, բարեղ բերկրութիւն, յուսոյ սեսութիւն, Թագաւոր փառաց, Քրիստոս արարիչ, խոսովանեալ կեանք»: Կեանքը փայլեցաւ իրենց առջեւ, անմահ գարունի Աստուածային փթթումով. լոյսը փայլեցաւ՝ հոգւոյ սրարեցուցիչ. սէրը փայլեցաւ իրենց՝ սրտի երջանկութիւն անպատում և անվերջ: Ակնթարթ մըն էր. անմահացան ակնթարթի մը մէջ. Եւ երբ կանգնեցան, յիշեցին իրենց արտասուող եղբայրները, Առաքեալներն ու աշակերտները:

պէտք էր աւետարտութիւնը անոնց։ Այն ատեն Հաւատքն ու Սէրը իրենց առաջնորդ ջանքի եղան խաւարի մէջ . վազեցին ու վազեցին, վազեցին դէպի Երուսաղէմ . խառնվանք զիրենք եղբայրսիրութիւնը . ամէն գաղափար ու տիեզերքը բովանդակ անհետացան իրենց հոգիէն, ուր շնորհարաշխ և անմահ մտած էր Յիսուս . Յիսուս միայն մնաց հոն՝ իրենց հոգւոյն մէջ, շնորհարաշխ և անմահ։ Եւ վազեցին վազեցին . անոնց ետեւէն կը բուրէին ծաղիկները, կ'երգէին առուակները, վարսագեղ կը ծածանէին ուռիները, կը դալլալէր Սոխակը . իրենց քայլերուն շող կը կաթեցնէր Լուսին։ Եւ վազեցին ասպարէզներ, միշտնոր կորովով, Հաւատքով, Սիրով . եւ հասան ու մտան Առաքելոց տունը, և հեւ ի հեւ և բազկատարած և հոգեզմայլ վկայեցին ու գոչեցին . «Յարեա՛ւ . . . :

* * *

Այո՛, ՅԱՐԵԱՒ և ՀԱՄԲԱՐՁԱԻ ու ՆՍՏԱԻ ԱՍՏՈՒԾՈՅ ԱԶ ԿՈՂՄԸ . եւ տիեզերք հաւատաց ու երկրպագեց։ Հեթանոս տիեզերքը հաստատ հաւատաց տաճաների ու Ձկնորսներու խօսքին ու ամենայն ինչ զոհելով երկրպագեց Ոստիկոյն Յարութեան և Աստուածութեան։ Այն Դերեզմանէն, այն Վերնատունէն ծագող արեւը ողողեց զաշխարհ . և տաճաների ու Ձկնորսները Յիսուսի գծած ուղղութեամբ քալեցին ու վազեցին . և Եկեղեցին տիրեց համափիւռ։ Յառեց Եկեղեցին իր աշուրները միակ նպատակին, ՅԻՍՈՒՍԻ, իր միակ կեանքին ցկատարած աշխարհի, իր միակ մտերիւմին, միակ յոյսին, միակ սիրոյն, իր աստուածային պաշտպանին անյաղթ, Թագաւորին Թագաւորաց և Տիրոջ տէրանց։ Անվկանդ քարոզեց Եկեղեցին փրկութեան խորհուրդները . Ապաւախարութիւն, որով ապահով է թողութիւնն ու ներումը . Հաղորդութիւն, միակ ապաւէնը նիզեհ և ճամբորդ մարդուն, որ կը անանի, կը գործնայ, կ'անմահանայ իր Աստուծոյն Մարմնով և Արեամբ . որ կը միանայ Երանութեան հետ անբաժան։ Եւ ապա կանացումի աշխարհը առաքելութեանց բուրաստան մը դարձաւ, տաճաների ու Ձկնորսնե-

րու խօսքով, որ սիւգն էր անմահ Գաւառին, որ շուռն էր Աստուծոյ։ Եւ անոնց ետեւէն քալեցին . վազեցին անոնց ետեւէն անթիւ բանականք . երեք դարեր շարունակ ծեր և երիտասարդ, կոյս ու երիտասարդ, այր եւ կին, գռեհիկ ու գիտնական, տխմարն ու հանճար, շարք շարք անդապելի եռանդով ու խանդով վազեցին . . . ի մահ . վկայելու համար թէ՛ Յարեաւ ու համբարձաւ . արեան հեղեղներով վկայեցին . Դարեր ու դարեր քալեցին ու վկայեցին ալեգարդ Հայրապետներ, գերիմաստ Վարդապետներ, ճրգնասէր մենակեացներ, շուշանափայլ կոյսեր, երամ երամ քալեցին ու վազեցին ու վկայեցին։ Եւ քալեցին, վազեցին ու վկայեցին որեւրիմ թշնամիներն ալ, թշնամիները՝ Յիսուսին ու Եկեղեցւոյ, իրենց անունն ըլլայ Ներոն կամ Արիոս, Հենրիկոս կամ Լուտեր, Վոլթէռ, կամ Գանթ կամ Զօլա, կամ անաստուած փիլիսոփայութիւն կամ Արդիապաշտ կեղծիք, թշնամիներն Յիսուսի ու Եկեղեցւոյ, յուսահատ վկայեցին՝ երբ փշրեցան կորան անվանելի Ոյժին առջեւ . երբ անհուն զորգիւնով տապալեցան գահեր, թագեր խորտակեցան, ինքնակալներ եւ ազգեր ածիւն դարձան . եւ Եկեղեցին՝ ա՛ն ատեն աւելի զօրաւոր՝ երբ աւելի հալածուած, ա՛ն ատեն աւելի տոկուն՝ երբ աւելի տկար, Եկեղեցին միշտ թարմ, միշտ յաղթական, քալեց ու կը քալէ ու պիտի քալէ այդ պանծալի ճամբէն . . . մինչեւ ցՀաւրանիս Գառնիւն (Յայտ . ԺԹ . 7, 9):

* *

Մի եւ նոյն ճամբան կը քալէ ամէն հոգի . Երկնային ծագումէն մեղքով խաւարած հոգին, որտմած, վաստաբեկ՝ աշխարհի ունայնութիւններէն, յոգնած ինքն իրմէն, կոյր, յանձնապատասխան, սկեպտիկ, անհաւատ, յուսահատ հոգին, առ խաբխափ կը քալէ ու կը վիճէ, պարտաոհալ ու սպառած . բայց հոգիներու Սիրահարը անշուշտ կը մօտենայ անոր, կը խոռովէ, կը յուզէ ազդեցութիւններով, կը ճմլեցնէ անոր սիրտը, Բա՛ց, ինձ, Բո՛յր իմ, մեքձաւո՛ր իմ, աղաւնի՛ իմ . վայելել կու տայ անոր՝ իր օրէնքին գեղեցկութիւնը,

աստուածայնութիւնը, խաղաղութիւնը. եւ եթէ բացարձակ ու բրտորէն չմերժուի, եթէ չվնասուի, մանաւանդ ամբարտաւանութենէ, մարմնասիրութենէ, յուսահատութենէ. եթէ վերջնապէս չէ թարշամած գարունը հողոյն, անշուշտ կ'ընկերանայ անոր, կը մտերմանայ, կը յանկուցանէ զայն, կը գրաւէ, կը տիրէ անոր: Այն ատեն կենսանորոգ յարութիւն կ'առնէ հողին, ա'յն ատեն կը հաւատայ աներկեւան ու խնդալով. երանի՜ որոց ոչ իցէ տեսնալ եւ հաւատացնել: Եւ որովհետեւ Քրիստոսի հետ յարեալ, ապա ուրեմն կը խորհի միայն ինչ որ վերին է, երկնային է, միշտ ի վեր բնծայեցնելով իր միտքը, միշտ կը վնասէ վերինը, ուր Քրիստոս կը նստի ընդ աջմէ Աստուծոյ. քանզի մեռաւ անոր նմանակից ու խաչակից, ու իր կեանքը ծածկուած է Քրիստոսի հետ՝ յԱստուած: Ամէն օր կը սպաննէ երկրաւոր ցանկութիւնները, կը մերժէ աշխարհի միջթարութիւններն ու բարեկամութիւնները. չի վախճար աշխարհի ատելութենէն, զի աշխարհ նախ զՔրիստոս ատեց. և ինքը՝ սուրբ ու սիրեցեալ ու լրջուած շնորհօք ու առաքինութիւններով ինչ որ ընէ յԱստուծոյ Տեառն Յիսուսի կ'ընէ (Կող. Գ.): Այսպէս կը բնակի անոր մէջ Քրիստոս՝ իր կեանքը, յոյսը, սէրը: Հազիւ կը մոտենայ Յանկալին, կը հեղեղեն խաղաղ արտասուք ապաշխարութեան, փառաբանութեան ու խնդութեան. հազիւ կը միանայ Յանկալին իր Մարմնով ու Արեամբ, ու կը մրմնջէ՝ Սիրեմ զիս առաւել քան զդոստ. եւ ահա ինքնազոհ կ'երջանկանայ հողին իր փեսային հետ. զի Անոր խօսքը քաղցր է ու դիմքը գեղեցիկ. լաւագոյն է իրեն համար՝ Յիսուսի հետ խաչի վրայ ըլլալ, քան թէ առանց անոր ի վաշելա. Կարգին եմ ես ի սէր քո: Եղբորդի իմ անց եւ ոգի իմ ել ընդ բանի նորա. խընդեցի զնա, կոչեցի զնա... Թագաւոր սիրելի, քեպէս եւ ծածկեցաք ի տեսնելէ՝ աչք մեր յըսնաւորք: Եւ հողին կը քալէ, կը վազէ Յանկալոյն հետ, զի Յիսուս է նախապարհ. կը լեցուի լուսով զիտութեան. կը վսեմանայ, կ'աստուածանայ, զի Յիսուս է ձեմաքսութիւն. կ'երջանկանայ հանապազօրեայ մեռուց-

մամբ և աղէխարշ սիրով, զի Յիսուս է Կեանք: Դի՛ր զիս իբրեւ զկնիք ի սրտի քոմ եւ իբրեւ զմասանի յաջոյ ձեռքն քո... զի բունն է իբրեւ զմահ Սէր, եթէ տեսնալ զամենայն զկեանս իւր ընդ Սիրոյ, անգոսնելով անգոսնեցեմ զնա: Եւ կը քալէ, կը քալէ. դէտակն առ Յիսուս, դէտակն ի վեր. զի Յարուցեալն ըսաւ. Որ սիրէն զիս, եւ ես սիրեցիք զնա եւ երեւցուցիք նմա զիս: Ես յարուցիք զնա յաւուրն յեսնում: Արշալոյս է մահը. ու մենք պիտի աներեւութանանք, աստղերու պէս սուղուելով անմահ Արեւուն լոյսին մէջ անոր յաւիտեանական շողերէն ու զողուած ու պարուրուած:

*
* *

«Իմ քով մնացի՛ր, Տէ՛ր Յիսուս, զի ընդ երեկս է ու կը տարածամի օրս»: Ահա լրմըննալու մօտ է ճամբան. իմ սիրելիներ մահուան խորշակէն կը թօթափին դեղնած տերեւներու նման: Ե'ս ալ վաւասակեցայ ի նախապարհէն. ու կ'ուզեմ նստիլ առ աղբերքն, որ ունի ջուր կենդանի եւ անճարաւ: Մեռածներորդ ժամու խեղճ մշակ, ալեհեր և չարատանջ և վաստակաբեկ կը պաղատիմ, կը պաղատիմ ոտքերուդ փարեւով. Իմ քով մնացի՛ր, Տէ՛ր Յիսուս, երկնից Գարունին ո'վ Լոյսդ իմանալի. «Ծագեցէ լոյսդ, արագեցէ փրկութիւնդ, հասցէ օգնութիւնդ, կանխեցէ ցօղդ ողորմութեան, յառաջեցէ, արբուցէ զանդաստանս պաշտեալ անկեալ ոսկերացս թշուառութեամբ ի վրէն մահու. ծաղկեցէ պողաբերեցէ բաժակդ երկնաւոր Արեան Կենարարիդ դերկիրս խնամեալ աւուր լուսոյ. զի ամենայնիւ մահացեալ հողիս մարմնովս մեղաց, քեւ նորոգեցայց՝ զատեալ ի մեղաց, անմահ կենդանութեամբ ի յարութեանն արդարոց»: Իմ քով մնացի՛ր, Տէ՛ր Յիսուս. եթէ հեռագոյն եւս ուրեք երբայ կ'ուզես, ե'կ առ իս, Տէ՛ր Յիսուս. ե'ս եմ քեզմէ ամենէն հեռագոյնը, սուղեալ յանդունդս մեղաց, մոլորեալ ոչխար. ինչակից Մօրդ բարեխօսութեամբ, իմ քով եկո՛ւր՝ Տէ՛ր Յիսուս. ես հողն ըլլամ քու սուրբ ոտքերուդ. եկո՛ւր իմ քովս, բա՛ց

իմ աչքերս, և ճանչցուր զքեզ ինծի. Տէ՛ր ծանո՛ ինձ եւ ծանեայց. այս տաժանելի պո-
ղոտայէն հողւոյս հայելիին վրայ կռուած փո-
շին Դո՛ւն սրբէ, զօրացո՛ւր զիս որպէսդի
առաթուր կոխեմ ու յաղթեմ մոնչող առիւծն,
աշխարհն ու մարմինը. և զոնէ արեւամու-
տին՝ Քե՛զ միայն ծառայեմ ու զՔեզ միայն
սիրեմ. Քե՛զ փարիմ խանդակաթ, անվերջ
համայնորով, ո՛վ քաղցր Ուղեւորք Եմմաւուսի
որ «ձանապարհորդեցիր ընդ ամենայն կիրս
մարդկային կենցաղոյս՝ առանց մեղաց».
Դո՛ւ քաւիչ, Դո՛ւ ապաւէն, Դո՛ւ Փեսայ
սիրատունչ հողւոյս:

Իմ քով մնացի՛ր, ո՛վ ցանկալի Փեսայդ
իմ Յիսուս, իմ քով մնացի՛ր յաւիտենից յա-
ւիտենան . . . :

ՏԵՐ ԿՈՄԻՏԱՍ ՔԱՀԱՆԱՅ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՆԱՀԱՏԱԿ

ԺԱ.

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԱՐԴԱՐ ՎՐԷԺԽՆԴՐՈՒԹԻՒՆ
ՆԻ ՍՔԱՆՁԵԼԻՔ ՏԵԱՌՆ ԿՈՄԻՏԱՍԱՅ ՎԵԱՅԻՆ

(Շար.)

Հոս կ'աւելցնենք հետեւեալ հրաշքները
որ Տեառն Կոմիտասայ բարեխօսութեամբ գոր-
ծուած են, արժանահաւատ վկաներու, բը-
ժիշկներու երդմամբ և ստորագրութեամբ
հաստատուած, եւ եկեղեցական իշխանութեան
կողմէ պաշտօնապէս վաւերացուած են, ու-
րոնք ուրիշ չատ մը այս տեսակ հրաշագոր-
ծութեանց վաւերաթուղթերու ծրարին մէջ
զգուշութեամբ պահուած են վերոյիշեալ Բե-
րայի Հ. Կաթողիկէ Պատրիարքարանի դիւա-
նատան մէջ:

Ա. — Պոլսոյ Հայ Կաթողիկէ հասարա-
կութենէն Սօֆի Բէքմէզեան, դուստր Յու-
վակիմ Հաճի Ստեփանեանի, 1863, Յունւլ.
11/23, Ուրբաթ օրը (Ը. Ե.) Ժամը 2ին կրօ-
նական ժողովոյ առջեւ, որուն կը նախա-
գահէր Յովհան Վ. Քիւրէշեան դիւանապետը,

երդման ձեւը կատարելէ ետքը, իր անձին
վրայ գործուած հետեւեալ հրաշքը պատմած
և ստորագրած է. ինչպէս նոյն բժշկութիւնը
ի մէջ այլոց երդմամբ և ստորագրութեամբ
հաստատած են Սօֆիի հայրը, վէրքը դար-
մանող բժշկապետ Բիշէթրօ Քալլէյեա, Տիկ.
Չէշլիւիա Տէմճեան, Պօղոս Անանեան, Ռէ-
ճիսա Անանեան, Մարիօնքա Անանեան ևն.:

Վերոյիշեալ պաշտօնական արձանագրու-
թենէն կը քաղուի թէ Սօֆի Բէքմէզեան
(ծնեալ Հաճի Ստեփանեան), Քրիստոսի 1850
թուականին՝ մինչ տասնութը տարեկան էր,
կոկորդին ձախ կողմը երեք տարիէ ի վեր
զոյացած խղատանձի (սըրաճա) ախտով չա-
րաչար կը տանջուէր, և բժիշկներու, վիրա-
բոյժներու որոշողութեամբ վէրքը հինգ սան-
թիմէզը պատուէ հարկ եղաւ, հիւանդը խոս-
տովանեցաւ և հաղորդուեցաւ, և գործողու-
թիւնը կատարուեցաւ. բայց այդ վրտան-
գաւոր գործողութենէն փոխանակ յաջող
սրդիւնք գոյանալու, ախտը աւելի ևս դը-
ժընդակ ձեւ մը առաւ և ստիպուեցան սոյն
թարախտ վէրքին մէջ տասը սանդիմէզը
երկայնութեամբ պատրոյգ ներմուծել, որուն
դառնութենէն հիւանդը անտանելի չարչա-
րանքի ենթարկուեցաւ և ցաւէն գլուխը չէր
կրնար վեր բռնել. վերջապէս Տիկին Սօֆի
երբ իմացաւ թէ այլեւս բժիշկները յոյսերնին
կտրած, և վէրքին անբուժելի ըլլալը յայտ-
նած են, և լսած ըլլալով որ Տէր Կոմիտաս
վկային բարեխօսութեամբ չատ մը հը-
րաշքներ կը գործուին, յանկարծ ներքին ազ-
գեցութիւն մը ունեցաւ նրանեւունցն գերեզ-
մանին դիմելու, և հակառակ իրեններուն ար-
գելքին, ընկերակցութեամբ Պետրոս Հիւր-
միւզի և ուրիշ ծանօթ երկու տիկիններու,
կառք մտաւ դէպ ի Պալըզլը, և գերեզմա-
նատան մօտենալուն պէս կառքէն վար իջաւ
և քովիններուն կոթնելով, բոկոտն գնաց
մինչեւ Տէր Կոմիտասի գերեզմանը և հոն
առաջին աստիճանին վրայ ծունկի գալով,
վէրքին կապերը վար նետեց և այսպէս քա-
ռորդ ժամ մը ջերմոտանդութեամբ աղօ-
թելէ ետքը, գերեզմանին ջրախառն հողէն
ափ մը առնելով բաց վէրքին վրայ փակցուց

և վրան լաթերով գոցեց։ Տուն վերադառնալուն, բոլոր անեցւոց առջեւ շարունակ խղիւայթող վերքին վրայէն իր ձեռքովը զըրած հողը վար առաւ և ի ցնծութիւն և ի զարմացումն բոլոր հետաքրքիր ներկաներուն տեսնուեցաւ թէ այն սարսափելի վերքը կատարելապէս գոցուած էր և մինակ անոր սպին տեսանելի մնացած էր։

Բ. — Ուղղափառ տիկնոջ մը որ իր վաղամեռիկ որդւոյն ցաւէն սաստիկ զգածուած էր, աջ կողմը մեծ և քարացեալ ուռ մը կը գոյանայ։ փորձառու բժիշկներ երկար ատեն աշխատելէ յետոյ՝ վերջապէս իրր անբուժելի ձեռնթափ կ'ըլլան։ Տիկինը կենդանի հաւատքով և լի յոյսով Տեառն Կոմիտասայ գերեզմանը երթալով, անոր բարեխօսութեանը կը դիմէ և կ'աղօթէ. և ջրախառն հողը ուռին վրայ քսելով տուն կը դառնայ։ Բիշ վերջը կը տեսնէ որ բնաւ ուռի հետք չմնալով, մարմինը իր նախնական վիճակին դարձեր էր. երբ Խղելութիւնը բժիշկին կ'իմացնէ, բժիշկը՝ հրաշքի հետ գործ չունիմ, կ'ըսէ, բայց մարդկօրէն անկարելի էր անոր բժշկութիւնը։ Ասիկա երդումով պատմեց նոյն տիկնոջ մօտ ազգականներէն ականատես վկայ բարեպաշտ տիկին մը։

Գ. — Ուղղափառ մետաքսագործ մը, Թըրքուհիի մը մետաքսէ բաներ շինել տալու առեն՝ անոր ի ծնէ մունջ տղան տեսնելով, վրան կը ցաւի եւ Երանելի Տէր Կոմիտասի հրաշքները պատմելով, կնիկը կը յորդորէ որ տղան անոր գերեզմանը տանի եւ հաւատքով աղօթէ։ Թըրքուհին նոյնը կատարելով և ջուրէն խմցնելով, տղուն լեզուն խկոյն կը բացուի ի մեծ ուրախութիւն իր մօրը։ Երեկոյն, հակառակ կնոջ ջանքերուն, որ վախէն կ'ուզէր գաղտնի պահել իր ամուսինէն, տղուն հայրը՝ այդ արտակարգ փոփոխութեան պատճառը իմանալով, խիստ կը բարկանայ, ըսելով որ «աւելի լաւ էր տղաս մունջ մնար քան թէ կեալուր ըլլար։ Այս խօսքին վրայ դարձեալ տղուն լեզուն կը կապուի։ Բայց հայրը այս յայտնի իրողութիւնը Աստուծոյ պատիժը համարելով կը ստորջանայ և այս անգամ ինքն ալ կնոջը հետ

մէկտեղ կը տանի տղան Երանելուն գերեզմանին վրայ, և կ'աղօթէ և երկրորդ անգամ անմիջապէս տղուն լեզուն բացուելով, մեծ ուրախութեամբ տուն կը դառնան։

Ինչպէս ըսինք, 300ի մօտ գործուած հրաշքներէն մինք առ այժմ այսչափով դո՛հ կ'ըլլանք, իբրեւ փառքիկ փունջ մը ներկայացնելով զայն։ Միայն թէ չենք ուզեր լուծեամբ անցնիլ ինչպէս մեր օրով եւս շարունակաբար ակն յայտնի կը տեսնենք, գործուած հրաշքներու կարգին կարծենք ամենաշօշափելին այս է որ, երկու հարիւր տարիներէ ի վեր այն պատուական գերեզմանի կողէն մեծ քանակութեամբ հող կ'առնուի և բնաւ զգալի պակասութիւն մը չ'երեւիր կամ փոս մը չի բացուիր։ առաջին օրը ինչ որ էր նոյնն է մինչեւ հիմայ։

(Շարունակելի)

ՀԻՉ ԱՍԼԱ ՄԵՎԳԻԻ ԻՃՐԱՅԱ ԿԷԼՄԷՅԷՆ ՊԻՐ ԲԷՇԱՍՄԵՐԼԻՔ

Քրիսթիան գանլարընը սէլէր կիպի իսալէ իթմիշ օլան Դիոկղետիանոս «Յարըն Քիլիսանըն սօնը սըր» տէր իտի։ Ֆէրտասը կիւն, Դիոկղետիանոս, էրզէվանիի Իմբէրաթօրիսի միւնսէլիպ օլմուշ, հիշ պիր էսէր պրագմագսըզըն թէրքի հայաթ էյլէմիշ։ Հալ պու քի Քիլիսա իսէ Կոստանդիանոս իլէ պէրապէր Բօմա Չէզարլարընըն թախթընա գուուտ իթմիշ տիր։

Միւնքիր Յուլիանոս «Յարըն Քիլիսանըն սօնը սըր» տէր իտի։ Ֆէրտասը կիւն, Յուլիանոս վէ քէնտինտէն սօնրա կէլէն պիր չօդ միւնքիրլէր քիւֆիւրլէրի արասընտա էօլմիւշ, հալ պու քի Քիլիսա պէր հայաթ գալմըշ տըր։

Վօլթէր, քէնտինէ մախսուս օլան թէ պէսսիւմի իսթիհգաքեարիսիլէ «Յարըն Քիլիսանըն սօնը սըր» տէր իտի։ Ֆէրտասը կիւն, Վօլթէր պիր քահանայ արզու իտէրէք սուրէթի միւնհիշէտէ էօլմիւշ. հալ պու քի Քիլիսա թազէ հայաթընտա պագի գալմըշ տըր։

Բօպէսըիւրէրէր, Մարալար, Իսթիւալը քէ-
պիւրէր քահանալարըն տար աղածընա չէքիւ-
տիլինի կէօրէրէք «Եւրըն Քիլիսանըն սօնը
սըր» տէրլէրտի: Յէրտասը կիւն, բէքզ իթ-
միւշ օլտուզլարը տար աղածընա քէնտիլէր չէ-
քիւմիւշ, հալ պու քի Քիլիսա եինէ գայիմ
գալմը տըր:

Պիզէ կազըն օլտն պիւր զէմանտա, ճէ-
մաթլարը Քիլիսայա գարըը խեանա թէշ-
վիզ մագսատըլա, «էն պէօյիւք տիւշմէն
բուհպանիլէթ տիր, մէզէնէպ տիր» նիտասըլա
քիւրսիլի խիթապէթտէն «Եւրըն Քիլիսանըն
սօնը սըր» տէնիւմիւշ տիր: Յէրտասը կիւն
պուշը տէյէնլէր հէր քէսին նէֆրէթինի մու-
ճիպ օլաճագ սուրէթտէ նապէտիտ օլմուշ,
հալ պու քի Քիլիսա թէքար պագի գալմը
տըր:

Զօլա «Եւրըն Քիլիսանըն սօնը սըր» տէր
իտի: Յէրտասը կիւն Զօլա էօլմիւշ, հալ պու
քի Քիլիսա էօլմէմիւշ տիր:

Պու կիւնքի տինսիզլէր տախի «Եւրըն
Քիլիսանըն սօնը սըր» «Օնուն զէմանը կէշ-
միւշ տիր, չուգուրընը գազալըմ» եօլունտա
բէֆի ալազէ խոյօրլար: Ֆագաթ եարըն սէ-
լէֆլէրի կիպի քէնտիլէր կէշէճէք, հալ պու
քի Քիլիսա տիւնեանըն նիհպէթինէ գատար
պագի գալաճագ տըր:

Հէր գեման ինրա օլունան

Պիւր բէյլամպէրլիք:

Յիսուս Քրիստոս «Աէն գայասըն, վէ պէն
Քիլիսամը պու գայա իւզէրինէ պինա էտէ-
ճէյէմ վէ ճէհէնէմին գարուլարը ծնա զալէ-
պէ իտէմէյէճէքլէր» պուլուրմը տըր: Եանի,
Քիլիսա տիւշմէնլէրինին, ֆիքրի օլտուն, հի-
լէքեար օլտուն, գանլը օլտուն հէր տիւրլիւ
հալաճանքլարընա բաղմէն, Քիլիսա տիւնեա
սօնունա գատար տէվամ իտէճէք տիր:

Յիսուս Քրիստոս, սէմա ու արզըն կէշէ-
պիլիւր, ֆագաթ քէնտի քէլամլարընըն կէ-
շէմէզ օլտուզընա պիզի թէէմին իթմիւշ տիր:
Օնուն պու գալը իլահիսի իքի պին սէնէլէք
վուգուլթլա սապիթ տիր:

Պինաէն ալէյի, էմին օլալըմ վէ ճէսարէ-
թիմիզի զայիպ իթմէյէլիմ. չիւնքի,

«Տիւշմէնլէրիմիզ պիզիմ իչիւն հազըրլա-
տըզլարը չուգուրա եարըն քէնտիլէր տիւշէ-
ճէք տիրլէր»:

Ս. ՊՈԶՆՈՍ ԵՒ ՔՐԻՍՏՈՍ (*)

(Շար. եւ վերջ)

Ըստ տեսակին, հաւանական է մի'թէ
ապիտուութիւնը: Հնա՞ր է հաւաաալ թէ նո-
րադարձ Սաւղոս շահագորդուած չըլլայ Բը-
րիստոսի մահկանացու կենաց մասին. թէ՛
Դամասկոսի մէջ իր կրկին անգամ ընակու-
թեան պահուն հարցուփորձ ըրած չըլլայ հա-
ւատացեալները. թէ՛ բան մը սովորած կամ
միտքը պահած չըլլայ Անտիոքի ու Երուսա-
ղէմի մէջ իր ըրած խօսակցութիւններէն Իւ-
խանին Առաքելոց, Յիսուսի սիրելի աշակեր-
տին, Յակովբի՝ Տիրոջ եղբօր, Բառնաբասի,
Շիղայի և Մայր Եկեղեցւոյ դեռ ուրիշ շատ
մը անդամներուն հետ, ա'յնպիսի վայրկենի
մը՝ ուր դեռ այնքան թարմ էր յիշատակը
Վարդապետին. թէ՛ Յիսուսի ապագայ պատ-
մագիրներուն Ս. Մարկոսի ու Ս. Ղուկասու
հետ այնքան տարի անցնելէ յետոյ, անոնցմէ
ընաւ տեղեկանալ ուղած չըլլայ ինչ որ ա-
նոնց ամենէն սիրելի էր, այս է՝ հրաշքներն
ու ճառերը այն մեծ հրաշագործին՝ որուն
Վարդապետութիւնը յեղաշրջած էր գաշ-
խարհ: Եթէ նոյն իսկ ուղղակի փաստերը
պակսէին, կարելի՞ էր մի'թէ ենթադրել Պօ-
ղոսի քով այսպիսի ցուցանք մը պատմական
հետաքրքրութեան և բարոյական անզգայաց-
ման հանդէպ անոր՝ որու պատկերը զիւ-
թանքն է իր մտքին:

Բայց ապացոյցները չեն պակսիր: Թող
հաւաքուին ցրիւ իր գրուածներուն մէջ ե-
ղած Յիսուսի երկրային կենաց վերաբերեալ
ակնարկութիւնները. թող մերձեցուի իր Վար-
դապետութիւնը Յիսուսի Վարդապետութեան.
Թող ուսումնասիրուին նման բացատրու-
թեանց իրական զիպումներն. այն ատեն
չպիտի ըսուի այլ ևս թէ, Առաքեալը կը տը-
գիտանայ կամ առ ոչինչ կը գրէ աւետարա-
նական պատմութեան բովանդակութիւնը:
Այս աշխատութիւնը ուրիշներէ եղած ըլլա-
լով, հարկ չկայ հոս կրկնելու: Ահա թէ ինչ-
պէս կարելի է համառօտել նման աշխատու-

(*) Տես Թիւ 83 էջ 147:

Թեան մը ուսումնասիրութենէն յառաջ եկած ազգեցութիւնը. Յիսուսի կենաց ու Վարդապետութեան մասին բացայայտ կամ թաքուն ակնարկութիւնները, կարծուածէն շատ աւելի բազմաթիւ են. ամէն պարագայի մէջ, Պօղոսի գրուածոց մէջ շատ աւելի են ակնարկութիւնները քան Նոր-Վտակարանի մընացած մատերուն մէջ. Աւետարանները չը հաշուելով, Այս ակնարկութիւնները երբեմն դոյզն մանրամասնութիւններ կը պարունակեն. և հետեւաբար՝ միջանկեալ կերպով յիշատակուած դէպքերու մասին աւելի լայն ու ընդհանուր ծանօթութիւն մը կ'ենթադրեն: Անոնց յիշատակութեան եղանակն ալ ապացոյց մըն է որ, թէ հեղինակն ու թէ ընթերցողը կրթութեան ու յիշատակներու հասարակ հիմ մը ունին, զորս կը բաւէ միմեկ հարեւանցիօրէն յառաջ բերել՝ հասկցուելու համար: Վերջապէս անկէ ծնած պատկերն ալ հաւատարիմակար մըն է. ու զանի գծողը կրնայ իրաւամբ պարծենալ թէ ինք ունի «Տիրոջ հոգին»:

Ահա այսպիսի է սուրբ Պօղոսի Քրիստոսը. աստուածամարդկային բաղադրութիւն մը՝ ուր ո՛չ աստուածութիւնը կը խաւարէ մարդկութիւնը՝ ո՛չ ալ մարդկութիւնը կ'աղօտացնէ աստուածութիւնը. անձնաւոր էակ. ինք իրեն յարնման, իր՝ աստուածային, երկրային ու փառաւոր կեանքին երբեակ հանգրուաններուն մէջ: «Միակ է Աստուած, միակ է նաեւ միջնորդը Աստուծոյ ու մարդկան՝ Յիսուս-Քրիստոս Մարդ»։ Անհուն անջըպետով հեռու մենէ իր մէկ բնութեամբ, Քրիստոս միացած է սակայն մեզի խորհրդաւոր իսկութեան զօգով մը. ան մեր մէջ կ'ապրի, ու մենք անոր մէջ: Եւ ահա այս պատճառաւ Առաքեալը մեր առջեւ կը բռնէ անոր պատկերը, ոչ այնքան անսպառ անունդ մը մատակարարելու մեր սքանչացման՝ որքան մղելու զմեզ որ անոր նմանինք և կամ մեր սէրը գրգռելու համար: Նոյնքան թափով ան մեր սրտին կը խօսի՝ որքան մտքին: Իր այնքան բարձր աստիճանի զգացած զգացումն է որ կ'ուզէ ինք ներշնչել մեզի ալ. «Եթէ մէկը չի սիրեր Մեր Տէրը, Յիսուս-Քրիստոսը, այնպիսին անիծեալ ըլլայ»:

Մ Ա Ր Ա Շ Է Ն

Մարաշէն կը տեղեկագրեն թէ Դեղագործ Պետրոս էֆ. Տէր-Յակոբեան, բնիկ Մարաշցի ծանօթ իր հակակղերական և ազգայնամոլ գոհիկ գաղափարներով, թեւադրուած տեղւոյն Ընկերվարական խմբակներէն, վերջերս քանի մը անգամ և անաստ անձեր զըլուխը ժողովելով, ջանացեր է «Հ. Կ. Կրթութախրաց Ընկերութիւն» անուան տակ քաղաքական կուսակցութիւն մը կազմակերպել, և ասոր համար յօրինել է կանոնադիր մը լի վտանգաբեր տրամադրութիւններով: Բարեմիտ Թաղականները նկատելով որ այս ձեռնարկը կրնայ իրենց Թեմական Մեսրոպեան վարժարանին հասոյթներուն վնասել, պատշաճ համարեր են հրաւիրել յիշեալ անձը որ միանայ արդէն գոյութիւն ունեցող Ազգային Ընկերութեան հետ և գործէ՝ հետեւելով իր յատուկ կանոնագրին: Բայց ժողովրդեան ինքնագիտակից և եկեղեցասէր դասակարգը, շնորհիւ տեղւոյն Առաջնորդական Փոխանորդին և քանի թունգ Կաթողիկէից ջանքերուն, որոնք ի վեր կը հանեն յիշեալ կանոնագրին յօդուածներուն իսկական իմաստն ու արժէքը, և Կ. Ճշմարիտ Եկեղեցւոյ իրաւանց չհամապատասխանելը, կը յաջողի մերժել այդ աղէտալի գործը՝ տալով հետեւեալ վերջնագիրը:

Վ. Ե Ր Զ Ն Ա Գ Ի Ր

Թերագգրսր ուղրուաւ ապ հեհնէկիսիզ Մարաշ Էրեհնի-Գաթոյիք Մեսրոպեան մեքթապի հիվէշա՝ Թեմական վի Առաջնորդական պիւ մեքթապ օրուայ հասակն իզ Եպիսկոպոսընդ սեհակաւսրա Պետրոս Դերապայծառ քարափրեսան քեհապ օրուարագ քեհի վի խաղեփիլիսին քանիքը նեղարեքիսեք իսարե օրուա կեշիկի:

— Սանիկն Բիքապը Շիրիփին «Հոգին Սուրբ հեհնաւսրն իսարեպիսի Եպիսկոպոսարա քիլիսի հյիկիլի սի» (Գործք Առաքելոց Գլ. Ի. 28) տեյու պույուրսըղընա նազարեհն հեք պիւ մեքթեք Բիլիսայա վի Վեփիլիի Եպիսկոպոսարա իրաւաւս մեհպուրիյեքիսիզ մեգնեպի մուգասսիսիլիզ վեգաիփիսեհն պույուրսըղը:

— Սպիտակ՝ Մեքսիկական կորիչն մու-
վաճաճողը քսիզիքի Եպիսկոպոսարարը քա-
րաճրնան օրնայույ միջերկրիցն վուզու
պուշան իրքիճազարդը վե սախեհեն իրնու
կեշիկի վե մեզնեպ, միշեք վե սեկեքե մու-
ղայիր օրնսըղը հաշե Եպիսկոպոսարարը
ուղուր մեարիճե հեք պիր քեշեպիսս վե
Փիլիպարըղու մուխալեճեք կեօսքեռնեհիսեն
մաս՝սս օղ պապե քեպիհարս հիսնեք պու-
յուրանազարը սախի Փեղգ էլ սեք շիպիհիզ
վե զիյասեպիյե սե միսճեռեպ պիր հաղ օյսըղը
վե պուեր հիշ պիր սահիպի վիճան Գարօյի
ինհարս գազըղանայանաղը ճիհեքի իշպու
քեշեպիսս օրնան եհնի Ընկերութիւնը ի-
նիզարնս հեք հաշե Եպիսկոպոսարարը մի-
սաս՝սսիսն իսքիհարս էլզեռ օյսըղը կիպի
ինսպրնս փեպիսն սախի մուսիպիյեին խօս
պե խօս վե միսարազըլեն Խիսանութիւնը պու-
յունանաղը վե սեվանընս Ընկերութիւն սզա-
րարըն վուզու պուրանազ հեք զարարարը կի-
վեճե Եպիսկոպոսըն քահեղա՝րընս քազիս
օրնուպ քեհնայ վե քապիպի հալնսս անճազ
մեկըրի ինարայ գօնուրայիյեհի վե ռեհի
հալնսս զարարը մեզիւր հեօփանիզ վե ա՛ղիս
զալանաղը ճիհեքիյի հեք հաշե զանուր Ըն-
կերութիւնս պիր հասար մասե իրքիսս օ-
յունանազ սր: Ինսի պու մեասիշե իրքիճազ
հասըղ օյուր իս նուղուր մեզիւրե մ. լիսպ-
պեք վե էլպիւրիկիյե շաղընանաղըղը վե իր-
քիճազ հասըղ օրնսըղընս մեքիպի մեզիւր
փեւաճի իս սապըգ Եպիսկոպոսարարը քա-
րաճրնան իսարե օյունանաղը վե օղ պապե
եարսընս միհեկյս հեփուս պույունայիյեհի
պեյան օյունը:

ԷՐՄԷՆԻ-ԳԱԹՕԼԻԲ
Քիլիսաբեքիւր Հեյեքի

Մարտ, Չորեքաբթի
13/26 Փետ. 1913

ՍՅԼԵՒՍԵԼՔ

ՍՓԻՆՔՍԻՆ ԳԱՂՏՆԻՐԸ Ի ՅԱՅՏ ԵԿԱՄ .

— Սփինքսը (Sphinx) հին եգիպտացիներ-
ըն ծագումն առած են զորս կը ներկայացնէին
պառկած առիւծի ձեւով, մարդակերպ գըլ-
խով: Նշանակ էին անոնք կամ արեւու որ
իր պաշտօնն ու մեհեններն ունէր Եգիպտոս,
և կամ Թեբացոց Ամոնրան զից: Ամենամեծ
Սփինքսը կը գտնուի Երրորդ Հարստութեան
ամենահզօր Փարաւոնին, Քէոպսի շինած
բրդաշիրմին (pyramide) մօտերը. չորս
կողմը դեռ ծածկուած է աւազով, թէև ըս-
տէպ կը մաքրուի: Այժման բարձրութիւնն է
17 մեթր, երկայնութիւնը 39:

Բրօֆ. Շրայնէր, Հարուարտի համալսա-
րանին մէջ եգիպտախօսութեան ուսուցիչ .
քանի մը շաբաթ առաջ սեմական թանգա-
րանին իշխանութեանց գրաւորապէս ծանոց-
եցիպտոսի Սփինքսին մէջ իր ըրած խուզար-
կութիւններուն արդիւնքը: Անոր մէջ յիշեալ
ուսուցիչը գտաւ արեգական նուիրուած մեծ
մեհեն մը, որ ամենահին բուրգէն շատ ա-
ւելի հին է. որովհետեւ իր թուականը Քր-
րիստոսէն վեց հազար տարի առաջ է, այ-
սինքն եգիպտական պատմութեան ամենէն
վաղեմի ժամանակէն: Մենէսի շիրմը, որ
եգիպտոսի ճանչցուած առաջին թագաւորն է,
որ և ինքզինքը աստուածացուց և շինեց
Սփինքսը, կը գտնուի անոր մէջ: Ասկէ զատ
բազմաթիւ նրբանցքներ կ'առաջնորդեն ան-
ձաներու որոնց մէջ ցարգ կարելի չեղաւ
թափանցել. որովհետեւ աշխատութիւններն
դեռ հազիւ հինգ ամիսէ ի վեր սկսած են:
Գլխուն մէջ կայ սրահ մը՝ 18 մեթր երկայ-
նութեամբ և 5 մեթր լայնութեամբ. այս
սրահը նրբանցքներով միացած է Արեւու տա-
ճարին: Հոն ուսուցիչը գտած է հարիւրաւոր
սրբազան առարկաներ, ինչպէս բոլորակով
շրջափակուած հոգակաւոր խաչեր, խորհրդ-
գանշան արեւու. ասոնց շատերը թափծու
ոսկիէ են, չուանով մը՝ որ կը ծառայէր
քուրմերուն անոնց զանգակիկները հնչեցնե-

լու և ոգիները վերակոչելու։ Սփինքսին շուրջը կը գտնուին նաեւ բազմաթիւ մանր բուրգեր։ Բրօֆ. Շրայնէր կը յուսայ եղեր քուրմերու արուեստին վրայ նոր գիւտեր ընել։ զի այս քուրմերը շատ խորունկ և դարմանալի ծանօթութիւններ ունէին մոզու-թեան վրայ։ Սակայն աշխատութիւնք շատ դանդաղ կը յառաջանան, անոր համար որ ֆելլաքները շատ կը վախնան Սփինքսին մէջ գիշերը անցընելէ, որովհետեւ համոզում ունին թէ անոր գլխին մէջ մեծ թուով սատանաներ կան, որոնք գիշերը հոն քընացողը մահուան կը դատապարտեն։

ԿԱԹՈՂԻԿԵՈՒԹԻՒՆ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ Մէջ .

— Մարդահամարը դարմանալի երեւոյթներ կ'արդիւնաւորէ, որով համեմատական չափով կը տեսնուի բացայայտօրէն դարգացումն կամ նուազումը։ Հնդկաստանի մէջ Կաթողիկէութեան ըրած յառաջդիմութիւնը թուանշաններու ճարտասանութեամբ դուրս կու գայ յաղթական կերպով։

Քաղքութեայի Եկեղեցական գաւառին մէջ, յորում կը պարունակուի նաեւ Տաքքա, Բրիչնակար և Ասսամ, այս է համեմատութիւնը տասը տարուան ժամանակամիջոցին մէջ։

	1901	1911
Կաթողիկ .	102,647	213,346
Միսիոնարք	142	183
Երկսեռ Կրօն .	330	400

Որմէ կը տեսնուի թէ տասը տարուան մէջ Կաթողիկէ ժողովուրդը աւելի քան կրկնապատկուած է։ Նոյնպէս հաստատութիւնք, դպրոցներ, Եկեղեցիք և այլն վեց հարիւրէն հազարի բարձրացած են։

Նոյն յաւելումը, քիչ թէ շատ մի և նոյն համեմատութեամբ, կը գիտուի նաեւ միւս գաւառներուն մէջ։ Ինչպէս են Մատրաս, Հայտէրապատ, Վիլակաքաթամ, ուր Կաթողիկէից թիւը տաս տարուան մէջ 80 հազարէն բարձրացած է շուրջ 110 հազարի։ Իսկ Բահանայից թիւը 107էն 143-ի և այս համեմատութեամբ նաեւ հաստատութիւնք աճած են։

Պոմպայի Եկեղեցական գաւառին մէջ շատ աւելի չեչտուած է զարգացումը։ Երեք հարիւր հազարէ՝ բարձրացած է շուրջ կէս միլիոնի։

Կը տեսնուի թէ Կաթողիկէութիւնը համեմատաբար ծաղկեալ վիճակ մը ունի Հնդկացի մէջ, եթէ չկարենայ ըսուիլ որ հըսկայաքայլ կը յառաջանայ, եթէ ի նկատի առնուի այս առեղծուածային երկրին հարիւրաւոր միլիոն բնակչութիւնը, որոնք զուրկ են դեռ Աւետարանի Լոյսէն և մը խորհուած Պրահմայական խաւարակու անտախապաշտութեան խորքը։ Քանի մը դար առաջ՝ միայն Ս. Փրահկիսկոս Բաւերեանի մը անզուսպ և անձնանուէր եռանդը տաս միլիոնէ աւելի Հնդիկներ շահած էր Բրիտոսի, բուպիկ շրջելով Կոայի հնդկական հրայրեաց աւազուտներուն վրայ, և երիտասարդ հասակին մէջ, խրճիթի մը մէջ, միայնակ մեռնելով իր խաչելութեան փարած։ Այդպիսի Առաքեալներուն քրտանց ու արեան պտուղները խամբեցուցին ռակիւնդիւր արիւնկզակ Եւրոպացի վոհմակներ, որոնք իրենց ազահ կրից ազգած տուայտանքներով դարչեցուցին բնիկները Եւրոպական անունէն, թէեւ ըլլայ ան ամենէն վեհ նուիրականութեանց յորջորջում։

Հիմա ամբողջ Հնդկաստանի մէջ Կաթողիկէից թիւը կը բարձրանայ երկուս ու կէս միլիոնի։ որուն կէս միլիոնը գրեթէ վերջին տասը տարուան առաքելական աշխատաւորներու արդիւնքն է։ Այս վաստակաւորաց թիւը շուրջ տասնուվեց հազար է։ Իսկ հաստատութեանց՝ շուրջ տասնուամէկ հազար։

Անհաճոյ չըլլար կարծեմ ընթերցողաց եթէ ներկայացնենք իրենց՝ ամբողջ մարդկային ցեղի արդի սթաթիսթիքը, համեմատական հաշուով կրօնքներու, արդիւնք՝ խղճամիտ և երկար աշխատութեանց և հսկումներու Հ. Բրոդէի։

Սչիւարհիս բնակչութիւնը	1561
Ոչ-Բրիտոնեայք	943
Բրիտոնեայք	618
Քրիստոնեայք	
Կաթողիկէայք	293
Ոչ-Կաթողիկէայք	325

Միլիոն

Ոչ-կարողիկեայ Քրիստոնեայք:

Բողոքականք	186
Յոյն և Ռուս Որթոտոքս	128
Ուրիշ արեւելեայք	11

Ուրիշ խօսքով. արդ և այժմ աշխարհիս մէկ երրորդէն աւելին Քրիստոնեայ է. Քրիստոնէից մէջ, կէսէն քիչ պակասը Կաթողիկեայ է:

Ոչ-Քրիստոնէից մարդահամարը սապէս կը դասակարգուի.

Կոնփիւսականք (ի Ձին), 240 միլիոն. — Հինդուներ, 210. — Մահմէտականք, 207. — Պոլստայականք, 125. — Հոգեպաշտք, 99. — Թաւոյականք 49. — Հրեայք, 13. — Համագումար՝ 943 միլիոն որոց 797 միլիոնը Ասիոյ մէջ:

Ձենք կրնար չդիտել թէ վերոյիշեալ թըւանշաններն պերճօրէն կը ցուցնեն թէ որքան սխալ է եւ դիտումնաւոր՝ Կաթողիկէ եկեղեցւոյ թշնամեաց այն խօսքը թէ՝ Կաթողիկէութիւնը մարեւել վրայ եւ Թուանշանները լաւագոյն պատասխանն են այս խօսքերուն: Անոնք կ'ըսեն մեզի թէ Կաթողիկէութեան ապագան հակայապէս կը յառաջանայ, եւ մինք մեծ ցնծութեամբ կրնանք յիշել Նաայեայ Մարգարէական կանխասաց խօսքերն ուղղեալ Ս. Եկեղեցւոյ: Վերցո՛ւր քու աշուրներդ եւ նայէ՛. ասոնք բոլոր խմբուած են քեզի դիմելու համար. հեռուէն պիտի գան քու որդիքդ, ու դստերքդ ամէն կողմէն պիտի ծնանին քեզի: Ան ասեն պիտի տեսնես զարգացումդ. սիրտդ պիտի ընդարձակի ցնծութենէ. երբ ծովուն անդին քեզ պիտի գայ բազմութիւնը, երբ հզօր ժողովուրդներ պիտի դիմեն քեզի... քու դռներդ միշտ բաց պիտի ըլլան. որպէս զի քեզի բերուին բազմութիւն ժողովրդոց»:

Մեր պարտքն է գործակից ըլլալ այս նախագուշակութեան:

ԱՌԱՄ. — ՈՐՔԱՆ ՄԱՐԴԻԿ, ԱՅՆՔԱՆ ԿԱՐՄԻՔ (*). — Տերենտիոսի այս երեւելի առածն այսօրուան օրս ալ շարունակ յեղյուռած բան մըն է թէ որչափ գլուխ կայ այն-

չափ ալ կարծիք (*). որուն թրքերէն բացատրութիւնը բնորոշ է և իսկատիպ. Հեք գաթասան պիր սես կելիյօր: Այս մասին հայ ազգը կրնայ առաջնութիւնն ստանալ՝ նաեւ ոսկի միտալով մը, եթէ համընթացական մըշուտ մը բացուի: Ինչպէս Տանդէի Դժոխքին դատապարտեալներէն ոմանք, նոյնպէս գաղափարներն ալ յաւիտենապէս իրարու կը բաղխին ահարկու ժողովով: Մինչեւ իսկ երբեմն գաղափարներ կը փոխուին միայն անոր համար որ կարեւր ըլլայ հակառակի: Ահա ուրեմն իւրաքանչիւր ումեք անձնիւր սովորոյթ (**): Պերսիոսըսած է.

Սեփական հանգամանք մարդոց, իրաց, եւ տարեր. Համակամ համամիտ երկու հոգի չես գտներ:

Այս իմաստով է նաեւ այն երգիծաբանական խօսքը թէ՝ «Հօրեմական ժառանգութենէն հրաժարող կրնայ գտնուիլ, բայց իր գաղափարէն հրաժարող եւ ոչ մէկ մը կը գտնուի»: Ասոր համար է որ Որատ կը հեղնէր թէ՝

Իմ երեք կոյնականք իրարու եւ հակառակ Քիմֆերնուն կասարեալ տարեր խորհիլ խնդրելով:

Վերոյիշեալ Տերենտիոս իւր Փորմիրնին մէջ գեղեցիկ կերպով կը ծաղրաբանէ ենթադրելով երեք փաստաբաններ յորոց մին կը հաստատէ, միւսը կը ժխտէ, իսկ երրորդը խորհրդակցութիւն կ'առաջարկէ:

Եւրիպիդէս նոյն վճիռը կ'արձակէր. «Եթէ գեղեցիկն ու պատուականը ամենուրեւ համար մի եւ նոյն ըլլար, մարդոց մէջ բնաւ հակաճառութիւն ու վէճ չէր ըլլար: Արդ ոչինչ կայ յար եւ նման, ոչինչ կայ միեւնոյն՝ մահացուաց համար. հնար է թէ բոլորը մի եւ նոյն հնչեն, բայց իմաստ եւ գործ բոլորովին կը տարբերին»:

Մարդոց վիճակը յիրաւի ցաւալի է. ազգեր, ընտանիքներ, անհատներ շարունակ զիրար կործաներ են ու կը կործանեն. կարծիքներուն պայքարը ոչ նուազ ահարկու եղած է. չէ եղած փիլիսոփայ մը որ ուրիշ փիլիսոփայի մը դրութիւնը նոյնութեամբ ընդգրկած ըլլայ:

(*) Quot capita tot sensus.

(**) Suus cuique mos est.

(*) Quot homines tot sententiae.

ՄԱՐԻԱՄԱՐԻ ԱՄԻՍՈՐ

Ամիսն անա՛ Սուրբ Կուսին,
Ամիսն յոյժ գեղեցիկ.
Աստուածամօր միասին
Ուղղե՛նք երգ մը բաղցրիկ.
Ծաղիկներով խնկահոս
Հարդարե՛նք իր սանար.
Նրւագներով եռանդնոս
Գովե՛նք իր գեղն անհառ.
Նոր զարուհին գեղանի
Կը գովենք բոյրն ու բոյր.
Մարիամ անկէ շա՛ս ունի.
Թէ՛ շնորհիք թէ՛ հրապոյր:

Աստղեր պայծառ շողողուն՝
Երկինքի ճափիւղայ,
Նուազ ցոլներ կը հեղուն
Քան աչկունք Մարեմայ:

Հորիզոնին վերելի
Արեւոյսն ակնաբով՝
Անուհ, նրսեմ կ'երելի
Մարեմայ գեղոյն քով:

Վրճիս ցոլով իր գոյնին
Հովիթին քինջ շուշան՝
Աստուածամօր երկնային
Մարութեանն է նրան:

Երեւն գեղով ծածկասեր՝
Պատկանոս մանուշակ,
Խոնարհութեան է պատկեր
Կուսամօր անուշակ:

Վարդը գոհար այգորօր,
Իր բոյրով վառ ի վառ,
Կը նրկարէ Կուսամօր
Սրտին սէրն անսպառ:

Կո՛յս, մեր սրտին տո՛ւր համակ
Քու ձիւրքեր գեղեցիկ,
Որոնց են լոկ նրանակ
Այս ծաղկունք վաղանցիկ:

Մեր Հայրենեաց անձկաւէ
Բրէ զմեզ արժանի,
Որ դուստենք առ յաւէ
Փառքդ, Մայր Գեղանի:

Թարգմանեց
ԽԱՅԻԿ Վ. ԱՅՈՒՆԱՍԵԱՆ

ԵՐԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵՒ

ՏՕՆԱՅՈՅՑ

Մայիս 4	† Կիր. րձ.	Երկրորդ Ծաղկաւարդ
5	Բշ. րկ. ԽԴ.	or Յինանց
6	Դշ. րձ. ԽԵ.	»
7	Դշ. րկ. ԽԶ.	»
8	Եշ. րձ. ԽԷ.	»
9	Ուրբ. րկ. ԽԸ.	»
10	Շր. ան. ԽԹ.	»

Ս. ՓՐԱՆՍԻՍԿԱՍ ՍԱԼԷԶԵԱՆ (S. François de Sales)

Ծնաւ յամի Տեառն 1567, Օգոստոս 24ին, ձիւնէվրայի նահանգին Սալ գիւղակին մէջ: Սրտնա հըռ-
չակաւոր առհմէն սերած իր մօր Կոմսուհւոյն խը-
նամքովը՝ մեծ բարեպաշտութեամբ դաստիարակուե-
ցաւ, և շատ կանուխէն ցոյց տուաւ մեծամեծ ա-
ռաքինութիւններ, մանաւանդ ողջբառաց համար
արտաքոյ կարգի սէր և առատ զթուլթիւն: Ոչ միայն
իր անմեղ զուարճութեանց համար իրեն տրուած դը-
րամը ամբողջովն անոնց կը բաժնէր, այլ նաեւ երբ
ուրիշ միջոց չունենար անոնց օգնելու՝ նոյն իսկ ինք-
զինքը կը զրկէր իր օրապահիկ ուսուցիչէն՝ զայն ա-
նոնց տալու համար:

Նախ ուսումնաբը Աննրօի մէջ կատարեց. ապա
Բարիդի մէջ. ուր վարպետ ունեցաւ աստուածաբա-
նութեան՝ նշանաւոր գիտնական Մալսոնադը, Յի-
սուսեան Բնկերութեան, մեծ աստուածաբան և Ս.
Գրոց մեկնիչ. իսկ լեզուներու համար ուսուցիչն ե-
ղաւ բաղմահմուտ Կեներրադ, Ս. Բենեդիկտոսի
Կարգէն, որուն վրայօք շատ գովասանքով կը խօսի
մեր Սուրբը՝ Աստուծոյ Սիրոյն վրայ յորջորջուած իր
հիանալի գործոյն ԺԱ. Գրքին ԺԱ. Գլխուն մէջ:

Առանց զանց ընելու մասնաւորութիւնը և գի-
տութիւնները, անձնատուր եղաւ մանաւանդ Սրոց
գիտութեան: Գտնէ շարքով անգամ մը Ս. Հաղոր-
դութեան խորհրդոյն կը մտալէր, և այս համեղա-
ճառի սեղանին կը հրաւիրէր նաեւ զինքը տեսնելու
եկողները: Միշտ գերազանց փափաքով բորբոքած էր
անարատ պահելու համար ողջախոհութիւնը. և օր
մը, երբ Ս. Սաեփոստի Եկեղեցւոյն մէջ Ս. Աստ-
ուածածնի Պատկերին առջեւ կ'աղօթէր, այս երկ-
նաւոր առաքինութեան խորհրդածութեամբ այնքան
վառեցաւ ու արծարծեցաւ իր սիրտը, որ նոյն ժա-
մուն Աստուծոյ ազգեցութեամբ որոշեց և առա-
ջագրեց իր բոլոր կեանքին մէջ զայն պահպանելու
Այն օրէն սկսեալ, աղօթքի և մտածականի մէջ աւելի ե-
ռանդուն եղաւ, աւելի զգուշաւոր՝ իր զգայարանք-
ները մահացնելու, և աւելի խստապահանջ իր մարմնոյն
նկատմամբ, զոր կը ծնէր յաճախակի պահեցողութիւն-

ներով, հակումներով, ձողկանքով և խորքով, զոր սովորաբար շարժումն մէջ երեք օր կը հագնէր, և ասոնց նման խտտաբերութիւններով:

Այս միջոցիս էր որ իր առաքինութիւնը փորձուեցաւ՝ յուսահատութեան մեծատունը մէկ փորձութեամբը. ստատման իրեն կը թելադրէր թէ ինքը դատապարտելոց թիւէն է. և այս վիճակը տուեց ամիս մը. բայց Աստուծոյ բարեպաշտ ծառան միեւնոյն Ս. Ստեփանոսի Եկեղեցւոյն մէջ յոյժ ջերմեանդուութեամբ դիմեց առ Ս. Կոյսն՝ որ իր հզօր պաշտօնին էր. և հոն, գեանամած առաջի Սրբազան Պատկերին, սա առաջագործութիւնն ըրաւ. եթէ երբեք ամբողջ յուստեանկանութեան մէջ Աստուծոյ սիրելի ու պատուելի չկարենալու չափ ապերձանիկ խկ ըլլամ, գոնէ պիտի սիրեմ պինքն այս աշխարհիս մէջ, և որչափ որ կեանք պարզեւէ ինծի, պիտի դորձածեմ զայն ամբողջովին իր փառաքել համար: Այս առաջագործութիւնը իբրեւ լուսոյ ճառագայթ մը եղաւ, որ փարատեց իր մտքին խաւարը, և իբրեւ հարուած մը հզօր Աջին Յիսուսի որ խորատկեց փշեց իր բոլոր շղթաները: Այն վայրկեանէն իր սրտին բոլոր ալիքները հանդարտեցան. և տրեց կատարեալ խաղաղութիւն. և այս մեծ շնորհքին երախտագէտ ըլլալու համար, ուխտով հաստատեց իր նախկին առաջագործութիւնը, զոր նոյն տեղը ըրած էր՝ պահելու համար իր կուսութիւնը. բաց աստի, իր ազատարարը եղող Ս. Կուսին խոստացաւ ի պատիւ իրեն ամէն օր Վարդարան գրուցել:

Բարեգու մէջ իր ուսմունքը աւարտելէն վերջը, Բաալիս անցաւ՝ Բատուայի գեղահաշնակ համալսարանին մէջ իրաւագիտութիւն սորվելու համար: Հոն իրեն հոգեւոր հայր և իր տառնձնական ուսմունքներուն կարգադրող ընտրեց Յիսուսեան Հայրն Բոսրվէնը, և իբր ուսուցիչ՝ մեծանուն գիտնական Բանսիլը: Բայց այն կաճառը թէպէտեւ շատ հռչակաւոր էր իր ուսուցչաց համբաւով և աշակերտաց յաճախութեամբ. սակայն միեւնոյն ժամանակ շատ վտանգաւոր միջավայր մը եղած էր մոլութեանց, ու մտրդկային օրէնքները սորվող երիտասարդները բնաւ հոգ չէին տաներ Աստուծոյն օրինոց պահպանութեան: Մեր Սուրբ գիտցաւ այս վտանգներէն զգուշանալ: Անգամ մը չարահամբու կին մը զինքը չար գործելու հրապուրեց. Սուրբ թաւ անոր երեքը, և գլխուն նետեց բոցավառ խանձող մը: Բատուայէն մեկնեցաւ Դոկտորի խորով և գնաց այցելելու Հռոմ քաղաքը, ո'չ թէ աշխարհահաշնակ շէնքերուն համար այլ սոսկ իբրեւ սրբավայր և ողբերակն Կոնից: Անկեց անցաւ ի Լօրէթ, այցելելու համար Ս. Կուսին խցիկը: Երբ մտաւ այդ նուիրական տեղը, իր միտքը այնքան բարձրացաւ անոր մէջ կատարուած Աստուծոյն Բանին Մարգեղութեան երկրպագելի խորհրդոյն զմայլանքին մէջ, որ իր գէմքը սկսաւ բոցավառ ճառագայթել:

(Շարունակելի)

ՀՈԳԵՒՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ „ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ“ ԳՐԲԷՆ

Գիրք Ա.—Գլ. Ը.— Չափազանց ընթանալիկ
զգուսանալու վրայ:

Ամեն մարդու մի՛ բանար քո սիրտդ. սոյ խորհրդակցե՛ իմաստուն ու երկիւղած մարդու մը հետ:

Երիտասարդներու և օտարներու հետ ցանցաւ օտարութիւն:

Հարուսներ մի՛ շողոխորդեր. և մեծամեծներու իով կամաւ մի՛ յանախեր:

Խոնարհներու և միամիտներու հետ, չեմեռանդներու ու քարեկեցադներու հետ կենակցե՛. և շինութիւն օտոյ բաներու վրայ խօսե՛:

Կիև մարդու հետ ընթանալիկ մի՛ ունենար. այլ ամեն քարեպաշտ կիներն առ հասարակ յանձնէ Աստուծոյ:

Փափաքե՛ Աստուծոյ միայն և իր հեշտակներուն ընթանի լոյսը, և մարդկան ծանօթութիւնն խորշե՛:

ԳԱԹՈԼԻԲ ՄԷՉԷՊԻ ԷՍԱՍԼԱՐԸ (*)

(Տեւմաթ)

Շիմտի, 1. Բանթէիզմ սիսթէմի Ալլահ հազգրնա օլան Ֆիքիի քախրիպ էյլեր. չիւնքի Ալլահ լաեիլթէղայեիւր, նա միլթէնահի, հէր տիւրլիւ քէմալաթա մալիք վէ լազըմ էլ վիւճուտ օլուպ, Բանթէիզմին ալլահլըք տէրէճէսինէ չըգարմագ իսթէտիլի մատտիյաթ կիպի թէպէտտիւլ իտէմէղ, մահաուտ օլամագ, գուսուր վէ նէգայիսէ թապի պուլու-նամագ: Պինաէն ալէյ, Բանթէիզմ տէմէք ըրիյաքեար պիւր սուրէթտէ Ալլահ եօգ տըր տէմէքտէն ֆարգլը պիւր շէյ տէյիլ տիւր:

2. Բանթէիզմ սիսթէմի, սեպէպսիգ Էսէր օլապիլէճէյինի գապուլ իսիյօր, չիւնքի էյէր Ալլահ փուցեւսան Ֆարգլը վէ հայիգի Էսէսիյէր պիւր վարլըք տէյիլսէ, օ հալտէ լազըմ իւլ վիւճուտ: պիւր վարլըք եալընըղ պիւր տանէ օլտուղընտան, էօյլէ պիւր վիւճուտը մուլթ-լազա լազըմ օլան վարլըք մէֆգուտ տէմէք տիւր. պու վարլըղըն վարլըղը տա ինքեար օլունաճագ օլուրսա, քեայիյաթա վարլըք վէրմիլ օլան սէպէպ նէրէտէ գալըր:

(*) Տես թիւ 89, էջ 222.

3. Պու սիսթէմ. հիսսիյաքը պաքընիէյէ, վինսանա մուխալիֆ սիր. չիւնքի Բանթէ-իլմ տիւնհատան ֆարգլը շախսիյէթ վար օլ-տուղընը գապուլ իթմէյօր, հալպուքի պէն, գաթիէն շիւպէնէ տէմէյէճէք գատար էմինիմ քի, պէն պէն իմ, պիր պաշպար տէյիլիմ, պինսէն ալէյն պէնիմ Շախսիյէթիմ պաշգա-լարընքինտէն ֆարգլը տրր վէ պուսըն պէօյլէ օլտուղընը պէնտէ հիսս էտիյօրում:

4. Պու սիսթէմ, ազլըն մուհաֆեմաքընա տա գարշը տրր, չիւնքի ազլը սալիմ՝ Ալլահ-տա վէ ինսանտա եէկաթիկէրլէրինէ միւպային էվսաֆ վար օլտուղընը իտրաք իթաիյի հալ-տէ, Բանթէիլմ ինքեար էյլէյօր:

5. Բանթէիլմ, սահիհ պիր ճիննէթ վէ հէմտէ միւսթէհազըն ճէգա պիր ճիննէթ տիր. չիւնքի պու սիսթէմ, հէր նէվ վազիի գա-նուն, գանուն, վիճտան, վազիֆէ, ճէգա վէ միւքէաֆաթ ֆիքրլինի թախրիպ էյլէտիյի իչիւն, հէր տիրլիւ ֆէնալըղա գարու ա-լըյօր վէ ֆազիլէթի մահվ էյլէյօր:

3. ԲՕԶԻԹԻՎԻԶՄ

Բօզիթիվիզմ տէնիլէն սիսթէմ, մատտէ-տէն պաշգա հազըղի վէ սահիհ հիչ պիր շէյ գապուլ իթմէյէն, թէճըիւպէ իլէ սապիթ օլմայան հիչ պիր շէյին վարըղընա ինան-մայան պիր սիսթէմ տիր: Ալլահ, բուհ, հա-յաքը ուխեվիյի կիպի հասսէլէլիմիզլէ հիսս օլունամայան մէվճուտիյէթլէրի ֆարգլիյաթ գապիլինտէն օլտուղլարընը իտտաա իտէրէք ըէտտ էյլէր: Ինսանըն գատընը թէնգիլ էյ-լէյէն պու սիսթէմ, ըիյաքեար պիր մաթէ-րիալիզմտէն պաշգա պիր շէյ տէյիլ տիր:

Պու սիսթէմ, կէօյա ազլը պէշէրին էն սօն թէրագըրը վէ ինքիշաֆ ու թէքէմիւլաթը իլմիյէնին (évolution scientifique) տէ-րէճէյի գոււլասը իմիչ: Բօզիթիվիսթլէ-րին սէրտարը՝ Դօնթ, վէ իւթատլարը տա, Լիթթէ, Բընան, Բօպլինէ... տիրլէր: Պուն-լար մեվնուսաքըն սեպեպի եվիլիինի արա-մագտան իմթինա էտէր վէ օ սէպէպ մէճ-հուլ օլտուղընտան, ծնունդա մէշղուլ օլմա-մալը տրր տէրլէր: Պունլարա կէօրէ Վաս-սէսէն պաշգա, մատտէյէ մէրպուլթ օլան գուվլէթլէրտէն վէ պու գուվլէթլէրին նէ-

թիճէսի օլան գանունլարտան պաշգա հիչ պիր հազըղի վէ սահիհ մէվճուտաթ հօգ տրր: Պիլ ֆիլիլ իսպաթ էտիլէմէյէն, անալիզէ թա-պի թուլթուլամեան, թանգիմ թանհիֆ ի-տիլէմէյէն հէր շէյ իսպալի տիր: Նա միւթէ-նահիլիք, հագիգաթտան մահրում պիր իսեալ օլտուղընտան, նա միւթէնահի տիր տէնիլէն Ալլահ տա հօգ տրր: Ալլահ պիր էրճուֆէ, եախօտ չօգ չօգ, պու կիւն արթըգ ֆալի-տէսի օլմայան պիր ֆարզ ու գըեաա տրր: Բուհանի պիր ճան հօգ տրր: Ֆիքը, տիւ-չիւնճէ տէնիլէն, տէմաղըն մահսուլլարըն-տան, իֆրազաթընտան պաշգա պիր շէյ տէյիլ տիրլէր: Նիւլասէ, եալընը պիր շէյ վար տրր, օ տա մասսէ տիր:

Իշթէ Բօզիթիվիսթ թալիմաթընն պի-լանչօղ պունտան իպարէթ տիր: Ալլահը ին-ֆեար իքմէֆ. բուհանի ճանըն վարըղընը ին-ֆեար իքմէֆ, ուսապ ու ախլէագըն իսքիզա-լընը գապուլ իթմէք, ատապ ու ախլազ է-սաար Ալլահ օլմայուպ շէրէֆ հիսսի տիր, տէ-մէք: Պու մէնֆուր սիսթէմ, ալլահաղընգ վէ ըիյաքեար պիր մաթէրիալիզմ տիր:

Ալլահըն վարըղը հագընտա սէրտ ու իթեան իտիլէն միւսթէլիֆ պիւրհանլար պու գապիհ զէլալէթին ըէտտ ու ճէրհինէ քեաֆի տիր: Պու, քէնտի զիւիւմէրինճէ ալիմ օլան էֆքեարը պաթըլէ սահապը Բօզիթիվիսթիք, հէր շէյի ինքեար իտէրլէր, ֆազաթ հիչ պիր շէյ իսպաթ իտէմէզլէր: Հալպուքի պիգիմ պիւրհանլարընը գուվլէթինի քէսր իտէ-պիլմէք իչիւն, սատէ ինքեարտան պաշգա շէյէ տէ լիւզում վար տրր: Ալլահը ինքեար իթմէք, Ալլահ հօգ օլտուղընը իսպաթ իթ-մէք տէմէք տէյիլ տիր: չիւնքի ալթը պին սէնէտէն պէրի Ալլահըն վարըղընա իման ի-տէն տիւնեա, պու կիպի ճապա ինքեարլարա պօլ պօլ կիւլմէքլէ մուգապէլէ իտէպիլիք: Իէօրիւն, աֆիթապը ինքեար իթմէսիլէ, աֆիթապ քէնտի էշիպը զէրինինի նէշը իթ-մէքտէն տուր օլմապ:

Նաղըգ քի, Բօզիթիվիսթլէր, հէր կիւն մէշհուտը ըյունըմըգ օլան ասարը քեալինա-թը հուսուլա կէթիթէպիլմէք իչիւն, պիր գուվլէթիք, պիր սեպեպիմ մէվճուտիյէթի

լազըմ կէլէճէյի ազլ ու մանթըզ գաիտէսին-տէն տէ պի պէհրէ պուլուռնըյորլար: Բասթէօր պուռնլարա չու միւքէվքէպ գուպպէյի ասիւման-տան էօթէ նէ՝ վար տըր, տէյէ սիւսլ իտէր:— Տիկեր միւքէվքէպ սեմալար:— Բէք էյի, ֆալաթ Օնլարտան տահա էօթէսէ նէ՝ վար տըր: Ֆիքրի պէշէր, գարշը գօնուլամազ պիր գու-վէթին սայիգասըլա, սահա իլերիսէն նիլէր վար օլտուղընը սիւսլ իթմէքտէն քէնսի-սինի ալամազ: Վէլէհասըլ, նա միւքէնսահիյէ կիտիպ տալանսալը. հալպուքի եալընըզ Ալ-լահ նա միւքէնսահի սիր:

Հէր հալտէ, լազըմ էլ վիւնուս վարլըզա գատար կիթմէլի, չիւնքի պալատէ իսպաթ իտիլտիյի իւզրէ, մէվնուտաթըն քեաֆֆէսի տէ պաշգասը թարաֆընտան վարլըզա մա-լիք օլմազ թարիգիյէ վար օլամազլար, պի-նաէն ալէյհ պիր լազըմ էլ վիւնուտ վարլըզա լիւզում վար, վէ օլազըմ էլ վիւնուտ վար-լըզ տա Ալլահ սր:

(Մապասի վար)

Ազասառնարս որ ալիքան լուտանք-ներ ժայթքեց. Կ. Հայոց Նոր Տոմարի հետեւելուն դէմ, կը հրաւիրէ իրենները տօնել Նոր Տոմարի Մայիս մէկը, անշուշտ Եւրոպայի ընկերվարականներուն իրենց համերաշխութիւնը ցոյց տալու համար... Բայց Հայ Կաթողիկէներուն ներքին չէ՝ եղեր Նոր Տոմարի հետեւել, բովանդակ Կ. Ալիսարհի հետ ունեցած միութիւննին չեղտելու համար !! ...:

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՀՌՈՍ ԵՒ ԿԱՅՈՂԻԿԷ ԱՇԽԱՐՀ

Սրբազան Քահանայապետին առողջական վիճակը լաւ է. կը յուսացուի որ քիչ ատենէն պիտի կարենայ պաշտօնական ընդունելութիւնները վերսկսել:

Մեծաշուք հանդէսներով կատարուեցաւ Մալ-թայի Հաղորդութեան Միջազգային համաժողովը Թրուս մասին պիտի գրենք գալ թուով:

* Ապրիլ 20ին, Մատրիտի մէջ, Նախարարապետ Ռո-մանոնէս հասկերդթ մը տուաւ Քահանայապետի Գեա-պանին, Ռակոնէզի Եպիսկոպոսին: Հրաւիրեալներուն մէջ էին, Գերմանիոյ և Աւստրիոյ Գեապանները, ինչպէս նաեւ Արտաքին-Գործոց, Պատերազմի և Արդարութեան Նախարարները: Հասկերդթէն վերջը տեղի ունեցաւ ընդունելութիւնը ամբողջ Գեապանական մարմնոյն և Մատրիտի ազնուական դատակարգին:

* Պարտոյի Արքեպիսկոպոսը, Վսեմ. Կարդինալ Անարիէօ, վերջերս արգիլեց Bulletin de la semaine կոչուած շաբաթաթերթը, նկատելով որ ան՝ իր ըն-թերցողներուն տնդգալապէս կը ներշնչէ ատելու-թիւն և արհամարհանք՝ նկատմամբ Ս. Գահին և Ս. Ժողովոյ վճիռներուն. և ներմուծել կը ջանայ Ս. Քահանայապետէն գատապարտուած ազատամիտ Կաթողիկէութեան ոգին, և կ'անգոսէ յանդուգն նա-լութիւններու դէմ՝ Եպիսկոպոսական իշխանութեան ձեռք առած միջոցները:

«Այս բոլոր պատճառներուն համար, կ'ըսէ Վը-սեմ. Մերանուսը, զօրութեամբ մեր հովուական պաշտօնին, ամէն կղերականաց և աշխարհականաց ուշադրութիւնը կը հրաւիրենք ուղղութիւն հրատարա-կութեան մը գատապարտելի հանգամանքին վրայ. զպաշտօնիս նոյնին՝ Կաթողիկէ Վարդապետութեան և բարոյականի մասին ստեղծած վտանգը, և կը յայ-տարարենք որ խղճի ամենածանր պարտք է ամէնուն ընաւ չբաժանորդագրուել և բաժանորդագրուած չմնալ այդ թերթին և ամենեւին չընթեռնուլ զայն»:

ՀԱՅ ԿԱՅՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆ

Խարբերդի Հոգեւոր Իշխանութենէն որկուած են հետեւեալ յեսու-կոչումները՝ ի հրատարակութիւն:

Արեւիկայասիւ Գերապայծառ Տէր
Տ. ՍՏԵՓԱՆ ԵՊ. ԻՍՐԱԵԼԻՆԱՆ

Առաջնորդ Կաթողիկէ-Հայոց Խարբերդի Վիճակին
Հ Ո Ս

Արհ. Գերապայծառ Տէր,

Ձեր Արհիպատուութենէն ստացած բացա-արութիւններու վրայ կու գամ յայտնել Ձեզ թէ՝

Գեռ տամնէ հինգ օր առաջ, ո՛չ պաշտօնական, և ո՛չ ալ անպաշտօն խողովակէ մը ընաւ լաւ չէի թէ Ս. Քահանայապետը բանադրած և հերձուածող ճանչ-ցած է Պալոյ Կ. Հայոց Ազգ. Վարչ. Ժողովը, ինչ-պէս նաեւ անոնք որ այդ ժողովին դիմում կ'ընեն:

Արդ՝ Քահանայապետական այդ որոշումներէն բոլորովին անտեղեակ ըլլալով Պալոյ Վարչականին դիմելու համար ինքզինքս ցարդ բանադրուած չեմ՝ կրնար համարել. և հիմակ ալ արդէն դադրած եմ՝ ժողովի մասնակցելէ, ինչպէս նաեւ ետ կ'առնեմ Պալոյ բանադրուած Վարչականին զրկած ստորա-գրութիւնս:

Այս տեղի ժողովին մասնակցելուս բուն շար-ժառիթը և յետին միտքը եղած է ապահովել լա-

տինածէս Հայերու քաղաքացիական իրաւունքները
և ոչ ուրիշ բան, ու հետեւաբար թող չկարծուի
թէ անհատարար կամ հաւաքաբար միաբերին ըլ-
լայ մաքաւիլ կրօնի կամ Եկեղեցականութեան գլմ.
Զայս ի գիտութիւն Ձեզ մտաուցանելով՝ մատ-
չիմ ի համբոյր Ս. Ալիդ. և եմ Արհիպատուութեանդ

Ամենախոնարհ Ծառայ
ՅՈՎ. Մ. ՇԵՐԱՆԵԱՆ

12 Ապրիլ 1913 ՀՈՍ

Ճշտօրէն ընդօրինակուած է:
Նոյն թիւ: + ՍՏԵՓԱՆ ԵՊՍ. ԻՍՐԱՅԷԼԵԱՆ

Արհիպատախ Գերապայծառ Տէր,
Տ. ՍՏԵՓԱՆ ԵՊՍ. ԻՍՐԱՅԷԼԵԱՆ

Առաջնորդ Կաթողիկէ-Հայոց
Ա Ս Տ

Արհ. Գերապայծառ Տէր,

Կաթողիկէ Եկեղեցւոյ Իշխանութեան կողմնէ
բանագրեալ ճանչցուած վերջերս Խարբերգի մէջ կազ-
մուած Վարչական Ժողովոյն, որուն անդամակցած
էի, գրաւոր կերպով ամսոյս 19ին հրաժարականս
տուած եմ:

Հը յայտարարեմ միանգամայն թէ ապօրինի կը
ճանչնամ իր բոլոր պարունակութեամբ Նոյն Ժողովոյն
կողմնէ եղած դիմումը և Պոլսոյ բանագրեալ Վար-
չականին և ետ կ'առնում իմ ստորագրութիւնս:

Կը խնդրեմ որ Դուք ալ զիս այդ Ժողովէն հրա-
ժարած նկատէք և հաճիք զարժանն տնօրինել հան-
դերձ Հայրապետական օրհնութեամբ:

Մնամ Արհի. Գերապ. Տեսուչ
Խոնարհ Ծառայ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՆԱԶԼԵԱՆ

23/5 Ապրիլ 1913 Մ. ԱՁԻԶ

Ճշտօրէն ընդօրինակուած է:
Նոյն թիւ: + ՍՏԵՓԱՆ ԵՊ. ԻՍՐԱՅԷԼԵԱՆ

Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

Գաւառներէն համոզ յուզիչ լուրերէն և դէպ-
քերէն ստիպուած, Էջմիածնական Հայոց Կեդր.
Վարչութիւնը յատուկ պատուիրակութիւն մը զրկեց
Ներքին Գործերու Նախարարին, որպէս զի կառավա-
րութեան ուշադրութիւնը հրաւիրէ և անմիջական
դարման խնդրէ: Նախարարը մերժած է ընդունիլ
պատուիրակութիւնը — Այս արտակարգ մերժումը
լաւ տպաւորութիւն չէ ձգեր հանրութեան վրայ:

Տէրութեանց Գեղարարները հաւաքապէս յայ-
տարարեր են Գարատաղի թէ Շքոտրայի առումը
բնաւ չի փոխեր Տէրութեանց որոշումը. ուստի պէտք
է որ Շքոտրան պարպուի և յանձնուի Տէրութեանց:

«Ժէօն-Թիւրք» կը գրէ. — «Կարինէն մեզ կը
հաղորդեն թէ Ռուս պատգամաւորներ ժամանակէ մը
ի վեր կը ջանան ժողովրդեան մէջ գրգռութիւն մը
առաջ բերելու: Տեղական Իշխանութիւնները գրաւե-
ցին գրութիւններ... որոնք կը գովեն Ռուսոյ թոյ-
լատու հոգին, և բարեացակամութիւնը, և կը թուեն
այն բարիքները զորս ժողովուրդը պիտի վայելէ անոր
հովանիին տակ ապրելով:

Կը հաւաստուի թէ Շքոտրա զինու զօ-
րութեամբ չառնուեցաւ, այլ Էստա ըստ ըստ
յանձնեց Գարատաղի հետ համաձայնութիւն գո-
յացնելով:

Օտմ. կառավարութեան և Պալքանեան զի-
նակիցներու միջեւ հաշտութեան բանակցութիւնը կը
շարունակուի: Զինագուլի երկրորդ պայմանագրով
աւարտելու վրայ է: Եթէ մինչեւ այն պահուն հաշ-
տութիւնը կնքուած չըլլայ, վախ կայ որ թըշնա-
մութիւնները վերականգնուին:

Շքոտրայի հրամանատար Էստա ըստ որ իր
զինուորներով ու թնդանօթներով Լէշի կողմերը բաշ-
ուեր է. Օտմ. կառավարութեան հրաման ընդունել է,
իր ընդի զինուորները վերջնական ընել և մնացեալ զին-
ուորներն ալ ծառայ հանել դէպ ի Պէյրութ:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ն

Դեպքեր եւ սկզբունքներ	273
Տէր Կոմիսսա Բահանայ	277
Հիշ ապա մէկգի ինքայա կելմէյէն պիր բէյդամպէլիք	278
Ս. Պողոս եւ Քրիստոս	279
Մարաշէն	280
Այլեւայլք	281
Մարիամու ամիսք	284
Եօթնեակ Քրիստոնէի	284
Գաթուիք Մեղիկայի Էսապար	285
Տեղեկագրական	287

ԱՐՏՕՆԱՏԷՐ

ՅՈՎ. Մ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԽՄ ԲԱԳՐԱՊԵՏ

ԳԷՈՐԳ Մ. ՎԱՐԴ. ԹԷՐԻՊՈՒՇԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.—Թուրքիոյ համար, տարեկան՝ 40 դիկ. արծ. վեցամսեայ՝ 20.—
մէկ թիւ՝ 1 դիկ.:— Սրտաստեման՝ տար. ժր. 10. վեցամս. 5.—Վնարմունք կանխիկ են:

ՀԱՍՑԷ.— Կարողիկէ Արձագանգ, Բերա, 5 Պայրամ փողոց 5, Կ. Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՔ.— 1.—Արձագանգ կը նրաստակուի Շաքսթ օրերը: 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատճառ կամ նայնութեամբ նրաստակել իրեն ղրկուած ա եւ է յօդուած: 3.—Կեղծանունով ղրկուած յօդուածներու հետինակը կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրապետին: 4.— Ձեռագիրներ եւ չեն դարձուիր: 5.— Յօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը ֆրանսացի: 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է անհրաժեշտ երկու դանկեանի նամակադրով ի միասին ղրկել:

ՏՊԱՐԱՆ Կարողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ըստ ամենայնի նոյն եւ ի վիճակի է որ եւ իցէ տպագրական գործոց համար: Կը տպուին ամէն տեսակ ծանուցումներ, զիրքեր, տեսքներ, հրաւիրագիրներ, քարտեր, քարդ-աստիւներ, մանագրներ, եւն., եւն.: Գիւններ տամբրցելի կերպով տաճան են: Գեղեցկագիտական նաւակի եւ տպագրական մատուցեան կողմանէ յաճախորդները անստուգիտ զոն պիտի մնան:

ԿԸ ԾԱՆՈՒԹԻ «Տարական Սկզբունք Բրիտանական Վարդապետութեան» հաստատեալ եկեղեցական իշխանութենէ եւ կիրառութիւնը հրամայեալ: Բաղկացած է 136 էջերէ: Գին, ամուր թղթակազմը 2 դիկն.:
